ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 126 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Ժպիտներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ Հ.126 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում գործող Երևանի հ.126 մանկապարտեզը հիմնադրվել է 1974 թվականին, որը ներկայումս գործում է 12 խմբով և երեխաների ցուցակային թիվը կազմում է շուրջ 391 երեխա։

2016 թվականին Երևանի հ.126 մանկապարտեզը հիմնանորոգվել է, որի արդյունքում՝ խմբասենյակները, խոհանոցն ու դահլիճները համալրվել են անհրաժեշտ ու նորացված գույքով։ Վերաբացվել է նաև մանկապարտեզի ձմեռային այգին՝ նոր շնչով և ոճով։ Մանկապարտեզի բակը նույնպես բարեկարգված և հագեցած է բակային խաղային ժամանակակից միջոցներով։

2016 թվականի նոյեմբերի 22-ին տեղի է ունեցել «Երևանի հ.126 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ընդհանուր ժողովը՝ մանկապարտեզի աշխատակազմի և տարիքային խմբերի ծնողական կոմիտեների նախագահների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են մանկապարտեզի անվանափոխության վերաբերյալ ներկայացված առաջարկությունները։ Քննարկման արդյունքում՝ (Արձանագրություն N-23) առաջարկվել է «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Ժպիտներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության։

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով և հիմք ընդունելով մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի միջնորդությունը ու տարիքային խմբերի ծնողական կոմիտեների նախագահների՝ ծնողական համայնքի կողմից ներկայացված առաջարկությունը, Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում ««Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆԻ Հ.126 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆԻ Հ.126 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ____

/կազմված 30.11.2016թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2016թ.

N ___-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՇԵՆԳԱՎԻԹ Տ/Բ-ի

ԿՈՂՄԻՑ 26.12.2008 թ.

Գրանցման թիվ՝ 26921003591

Վկայական՝ 03 Ա 083781

ՀՎՀՀ՝ 02217034

27.06.2012թ.-ին գրանցված

կանոնադրության

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2016թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ

_____

«ԺՊԻՏՆԵՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2016

«Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում, նախաբանում, 1-ին կետում «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել ««Ժպիտներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով։

Սույն փոփոխությունը հանդիսանում է 27.06.2012թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի հ.126 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: